ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/08/15>>

ք. Վայք «23» սեպտեմբեր2019 թ.

«Վայքի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Թ. Ավետյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՇՄՇ-23>>ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Մաթևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 23 բազմաբնակարան շենքի ջերմաարդյունավետության արդիականացմանը ուղղված վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 60 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում[30] (նախագծով) :

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21084000 (քսանմեկ միլիոն ութսունչորս հազար) ՀՀ դրամ, որից 3514000 (երեք միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վայք համայնքապետարան	<<ՇՄՇ-23>> ԲԲԸ
Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18	Ք. Վայք Համբարձումյան 6/4
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900342121036	Հ/Հ 115004672826
ՀՎՀՀ 08913477	ՀՎՀՀ 09101042
Համայնքի ղեկավար՝	Տնօրեն՝
Թ. Ավետյան	Հ.Մաթևոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«23» սեպտեմբեր 2019թ. կնքված
<<ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/08/15>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ընդհանուր տեղեկություն

Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 23 բազմաբնակարան շենքի էներգաարդյունավետության բարելավման աշխատանքներն իրականացվում են «Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման հնարավորությունը Վայք և Սպիտակ քաղաքներում» (ՎԱԷՀՔ) ծրագրի շրջանակում: Ծրագրի ընդհանուր նպատակն է աջակցել Սպիտակի և Վայքի համայնքապետարաններին՝ մշակելու և հանրային նշանակության ու բնակելի շենքերում փորձարկելու էներգախնայողության կիրառելի և արդյունավետ մոդելներ՝ էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացմամբ և էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառմամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից (80%) և համաֆինանսավորվում Վայքի և Սպիտակի համայնքապետարանների կողմից (20%): Ծրագիրն իրականացնում է «Հաբիթաթ ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամը (Հաբիթաթ Արմենիա):

Վայք համայնքի Ջերմուկի Խճուղի 23 շենքի էներգաարդյունավետության բարելավման աշխատանքների իրականացման համար Կապալառուի ընտրության մրցույթը իրականացվում է Վայքի համայնքապետարանի կողմից՝ Հաբիթաթ Արմենիայի հետ համագործակցությամբ: Շինարարական աշխատանքների իրականացման վերահսկողության (այդ թվում նաև Տեխհսկիչի աշխատանքի նկատմամբ հսկողությունը) և կատարվող աշխատանքների որակի ապահովման համար անմիջական պատասխանատուն հանդիսանում է Հաբիթաթ Արմենիան, որը պետք է հաստատի աշխատանքների կատարման ակտերը և հանձնման-ընդունման արձանագրությունները: Ուստի աշխատանքների Պատվիրատու Վայքի համայնքապետարանը չի իրականացնի որևէ վճարում Կապալառուին, եթե կատարողական ակտերը և հանձնման-ընդունման արձանագրությունները ստորագրված չեն Հաբիթաթ Արմենիայի պատասխանատու անձանց կողմից (շինարարության գծով համակարգող, ՎԱԷՀՔ ծրագրի ղեկավար):

Աշխատանքների իրականացման ընթացքում ցանկացած նախագծային կամ ծավալային փոփոխություն պետք է կատարվի միայն Հաբիթաթ Արմենիայի համաձայնությամբ և թույլտվությամբ:

Տեխնիկական մասնագրերը մրցույթի փաստաթղթերի /ՄՓ/ անբաժանների մաս են կազմում՝ Պայմանագրի դրույթների, մանրամասն գծագրերի և այլ պայմանագրի փաստաթղթերի հետ միասին: Մասնագրերը սահմանում և հետագայում զարգացնում են Պայմանագրով ենթադրվող շինարարական աշխատանքների իրականացման պահանջները: Ծավալաթերթ-նախահաշվում /ԾՆ/ երկիմաստությունների կամ Մասնագրերի և ԾՆ-ի միջև հակասությունների առկայության դեպքում՝ առաջնայնությունը տրվում է Մասնագրերին:

1. ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Առնվազն միշտ պետք է բավարարել ՀՀ Շինարարական Նորմերը: Այլ միջազգայնորեն ճանաչված ստանդարտները կարող են օգտագործվել միայն երբ

- Նրանք ավելի, կամ գոնե հավասարապես խիստ են ՀՀ նորմերի և չափանիշների համեմատ:
- Տվյալ դեպքի հպմար ՀՀ շինարարական նորմեր գոյություն չունեն:

Օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն ՀՀ շինարարական նորմերի ստանդարտ փաստաթղթերին:

Եթե Կապալառուն ցանկանում է մատակարարել նյութեր կամ իրականացնել աշխատանքներ այլ ազգային ստանդարտներով կամ միջազգային մասնագրերով, նա պետք է Տեխհսկիչին տրամադրի իր առաջարկի վերաբերյալ բոլոր մանրամասները՝ գրավոր եղանակով:

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

2.1 Կապալառուի սարքավորումը

Կապալառուն պետք է ապահովի այն բոլոր սարքավորումները, որոնք կլինեն պատշաճ և ապահով՝ աշխատանքը որակով կատարելու և այնպիսի առաջընթաց ապահովելու համար, որը կապահովի Մրցույթում նշված ժամկետներում աշխատանքները ավարտին հասցնելը: Եթե որևէ պահի սարքավորումները կհամարվեն ոչ արդյունավետ, ոչ համապատասխան կամ ոչ բավարար՝ աշխատանքը որակով կատարելու կամ պահանջվող առաջընթացն ապահովելու համար, ապա Տեխհսկիչն իրավունք ունի պահանջել Կապալառուից բարձրացնել արդյունավետությունը, փոխել կամ վարձակալել հավելյալ սարքավորում և Կապալառուն պետք է կատարի նման պահանջը:

2.2 Գոյություն ունեցող կառույցների և հարմարությունների պաշտպանությունը

Կապալառուն պետք է լիակատար պատասխանատվություն ստանձնի շինտարածքում առկա բոլոր սեփական և հանրային կամ մասնավոր բոլոր շինությունների, կառույցների և ճանապարհների անվտանգությունը՝ անկախ նրանից, թե դրանքներկայացված են գծագրերում, թե՝ ոչ:

Կապալառուն պետք է հատուկ ուշադրություն դարձնի նրան, որ խուսափի պաշտպանվող տարածքների ցանկացած վնասումից:

Կապալառուի գործողությունների արդյունքում պատճառված ցանկացած վնաս պետք է շտկվի նրա իսկ միջոցներով:

2.3 Տեղանքի ապահովությունն ու անվտանգությունը

Ապահովության և անվտանգության միջոցառումները պետք է կազմակերպվեն համաձայն ՀՀ հետևյալ օրենսդրական ակտերի.

1. «Շինարարական Աշխատանքների Կազմակերպման» մասին ՀՀ Օրենսդրության 2.1.7.8 Հոդվածի համաձայն:
2. ՀՀ քաղաքաշինության նախարարության հրաման՝ ՀՀՇՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը հաստատելու մասին, գլուխ IX. Աշխատանքի պաշտպանություն և շրջակա միջավայրի պահպանություն :

2.4 Նյութերի և սարքավորումների հանձնումը և պահեստավորումը

Աշխատանքային գործընթացում ներառված բոլոր նյութերը և սարքավորումները պետք է հանձնվեն և պահեստավորվեն այն եղանակով, որը զերծ կպահի նրանց ցանկացած տեսակի վնասվածքներից: Այն նյութերը և սարքավորումները, որոնք Տեխհսկիչի կարծիքով կլինեն նախատեսված հետագա աշխատանքների համար ոչ պիտանի, անհապաղ կհեռացվեն շինարարության տեղամասից, և Կապալառուն չի ստանա որևէ փոխհատուցում տվյալ նյութերի կամ նրանց հեռացման դիմաց:

2.5 Հստակ դրույթների բացակայություն

Այն ժամանակավոր բնույթի աշխատանքները, որոնց մասին հստակ դրույթներ չկան Ծավալաթերթ-նախահաշվում, կհամարվեն ներառված Ծավալաթերթ-նախահաշվի այլ միավոր արժեքների մեջ:

2.6 Աղբյուրների և նյութերի հաստատում

Այն նյութերը, որոնք հաստատված չեն լինի Պատվիրատուի և Հաբիթաթ Արմենիայի կողմից չեն կարող օգտագործվել շինարարական աշխատանքների համար:

Կապալառուն պետք է շարունակական հսկողության միջոցով համոզվի, որ միայն մասնագրերի դրույթների պահանջներին համապատասխանող նյութերը կօգտագործվեն աշխատանքներում:

2.7 Մաքրման աշխատանքներ

Կապալառուն պարտավոր է հեռացնել շինհրապարակից ցանկացած փլվածք, աղբ և այն ժամանակավոր աշխատանքները, որոնց անհրաժեշտությունն այլևս չկա:

2.8 Կապալառուի պատասխանատվությունը

Տեխհսկիչի կողմից տրամադրված հաստատումները չեն ազատում Կապալառուին իր պայմանագրով ստանձնած պատասխանատվությունից և պարտավորություններից:

3. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

3.1 Իրականացման ծրագիր

Աշխատանքների հանձնման համար իրականացման ծրագիրը պետք է պատրաստվի նախագծի իրագործման տևողության և աշխատանքների իրականացման ընթացքին համահունչ: Ծրագիրը պետք է ներկայացվի մի ֆորմատով, որը իր մեջ ներառում է բոլոր հիմնական գործողությունների աղյուսակը: Ոչ ավելի ուշ, քան յուրաքանչյուր ամսվա ավարտից հինգ աշխատանքային օր հետո Կապալառուն պետք է Տեխհսկիչին ներկայացնի թարմացված ծրագիր: Այն պետք է նվազագույնը արտացոլի.

- վերջին ամսվա առաջընթացը՝ համեմատած պլանավորված առաջընթացի հետ,
- հաջորդ ամսվա համար պլանավորած գործունեությունը:

3.2 Առաջընթացի քննարկման հանդիպումներ

Առաջընթացի քննարկման նպատակով Կապալառուն պետք է համաձայնեցնի Տեխհսկիչի և Պատվիրատուի հետ պարբերական հանդիպումների ամսաթվերը: Այդ հանդիպումները պետք սովորաբար անցկացվեն ամիսը երկու անգամ, ոչ ավելի ուշ, քան ընթացիկ ամսվա 3-րդ շաբաթվա կամ հաջորդող ամսվա 1-ին շաբաթվա ընթացքում:

3.3 Որակի վերահսկում

Կապալառուն պարտավոր է ստեղծել որակի ապահովման համակարգ՝ ցույց տալու համար համապատասխանությունը սույն պայմանագրի պահանջներին: Այդ համակարգը պետք է լինի պայմանագրում նշված մանրամասներին համապատասխան: Տեխհսկիչը իրավունք կունենա ստուգել որակի ապահովման համակարգի ցանկացած ասպեկտ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1 Նյութեր

Կապալառուն պարտավոր է օգտագործել միայն այն նյութերը, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական Մասնագրի դրույթներով ամրագրված տեխնիկական պահանջներին:

Պայմանագրով նախատեսված բոլոր մշտական աշխատանքները կատարելու նպատակով մատակարարվող նյութերը պետք է լինեն նոր ապրանքներ: Օգտագործված նյութեր չեն ընդունվի:

Մրցույթի գծագրերը հանդիսանում են շինարարության/տեղադրման/կատարման համար կազմված գծագրեր:

4.2 Փորձնական ստուգում (թեստավորում)

Վստահելի կարող են լինել միայն սույն Տեխնիկական Մասնագրի ցուցումներին համապատասխան տեսակով և քանակով իրականացված փորձնական ստուգումները՝ բացառությամբ, երբ այդ իրավունքը տրվում է Պատվիրատուին:

Պատվիրատուն կարող է պահանջել լրացուցիչ փորձնական ստուգումներ, երբ ստացված արդյունքները անորոշ են:

Բացի տվյալ Մասնագրով սահմանված փորձնական ստուգումների, Պատվիրատուն կարող է պահանջել լրացուցիչ փորձնական ստուգում՝ հնարավոր թաքնված բացթողումները և ազդեցությունները որոշելու համար:

Նման թերությունների հայտնաբերման դեպքում, տվյալ թեստավորումների բոլոր ծախսերը կիրականացվեն Կապալառուի հաշվին:

4.3 Աշխատանքների ստուգում և չափում

Պատվիրատուն ցանկացած պահի կարող է կատարել կատարված աշխատանքների որակի ստուգում և քանակի չափում: Եթե սա չի կարող արվել Կապալառուի օգնությամբ, վերջնաժամկետ պետք է սահմանվի՝ վարձելու համար արտաքին մասնագետներ: Այս դեպքում ծախսերը կհատուցվեն Կապալառուի կողմից:

5. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է կատարի որոշակի նախապատրաստական աշխատանքներ շինհրապարակում:

5.1 Տպատախտակներ և նշաններ

Կապալառուն պետք է տեղադրի և բարվոք վիճակում պահպանի նախագծի անունը և համաֆինանսավորող կազմակերպությունների անվանումները կրող տպատախտակ՝ պայմանագրի և ԵՄ տեսանելիության ուղեցույցների պահանջներին համապատասխանող տեքստով և տառաչափով:

5.2 Տեղանքի պատրաստումը

Կապալառուն պարտավոր է, Պատվիրատուի հետ համագործակցելով, Նախապատրաստել տեղանքը շինարարության համար:

5.3 Ժամանակավոր շինություններ

Կապալառուն պարտավոր է կատարել բոլոր ծախսերը՝ կառուցելու, շահագործելու և հեռացնելու ժամանակավոր շինությունները, եթե դրանք անհրաժեշտ են պայմանագրի արդյունավետ կատարման համար: Բոլոր նման շինությունների ստեղծման անհրաժեշտությունը պետք է արդարացված լինի:

5.4 Ընդհանուր հարմարություններ

Սանիտարական ձեռնարկումներ

Կապալառուն պետք է տրամադրի և կատարի ժամանակավոր սանիտարական հարմարությունների սպասարկումը՝ շինհրապարակում աշխատանքների հետ առնչվող բոլոր մարդկանց համար: Կապալառուն պետք է պահպանի հարմարությունները մաքուր, սանիտարական վիճակում, ինչպես նաև տեղադրի նախազգուշացումներ և կանխարգելման միջոցներ ձեռնարկի տեղանքը մաքուր պահելու համար:

Ջրի մատակարարում

Կապալառուն պետք է տրամադրի և ունենա իր օգտագործմանը համապատասխան քանակի խմելու ջրի պաշար: Ջրի պաշարը օգտագործվելու է շինարարական և ժամանակավոր հարմարություններում սպառման նպատակներով:

Հոսանքի մատակարարում

Կապալառուին անհրաժեշտ էլեկտրական հոսանքը պետք է տրամադրվի իր կողմից՝ իր իսկ հաշվին: Կապալառուն, աշխատանքները ստանձնելուց առաջ, պետք է հեռացնի բոլոր ժամանակավոր տեղադրումները, եթե չկա պայմանավորվածություն, որ Պատվիրատուն իր վրա է վերցնելու այդ տեղադրումները:

ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ –

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

6. ՓԱՅՏՅԱ ԿՐՈՂ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ

6.1 Փայտյա շինանյութի տեսակը

Փայտանյութը պետք է արտադրվի համապատասխան ՀՀ Շինարարական չափանիշներին: Բոլոր փայտե մասերը պետք է լինեն սոճու փայտից:

6.2 Փայտյա կրող կոնստրուկցիաների հավաքում

Մշտական կառույցի կայունությունը պետք է անմիջապես ապահովվի կառույցի ուղղահայաց ամրապնդման համար նախագծված մշտական միացումներով կամ ժամանակավոր մոնտաժվող միացումներով:

6.3 Աշխատանքների կատարման ստուգումը

Թաքնված աշխատանքները ենթակա են հանձնման, որի համար պետք է պատրաստել ակտ: Սրանք ներառում են՝

- Փայտային կրող կոնստրուկցիաների կամ նրանց բաղադրիչների պատրաստման և այլ աշխատանքներ, որոնք պետք է ծածկվեն այլ կատարվելիք աշխատանքներով:

7. Տանիք և ցինկապատ ծածկ

Բոլոր տանիքի հետ առնչություն ունեցող մետաղական մասերը, ինչպիսիք են ճակտոնները (ֆրոնտոնները), ջրի հոսքի ճանապարհները և խողովակները պետք է իրականացվեն 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով:

8. Ջերմային արդիականացում

Ձեղնահարկի հատակի ջերմամեկուսացումը պետք է իրականացվի 10սմ և 5սմ հաստությամբ հանքային բամբակի երկու իրար վրա դրված շերտերի միջոցով: Հանքային բամբակի խտությունը պետք է լինի 20–30 կգ/մ3 միջակայքում՝ 0.037 Վ/մ□Կ-ից ոչ ավել ջերմափոխանակությամբ: Գոլորշամեկուսիչը պետք է տեղադրված լինի ձեղնահարկի հատակի վրա՝ մեկուսացման շերտերի տակ: Գոլորշամեկուսիչը պետք է լինի <u>իզոսպան (ISOVER VS / URSA SECO B)</u>:

9. Պատուհաններ և դռներ

Բոլոր մետաղապլաստե պատուհաններն ու միջնորմ-դռները պետք է լինեն բարձր որակի, կրկնակի ապակեփաթեթով (4+4), նվազագույնը 4 խցիկով շրջանակներով:

ԲԱԺԻՆ 2: ՄԱՄՆԱՎՈՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՄՆԱԳՐԵՐ

1. Շինարարական աշխատանքների ծավալը և նկարագրությունը

Կապալառուի կատարած աշխատանքը ընդգրկում է հետևյալ հիմնական աշխատանքային տարրերը՝

- Տանիքի վերանորոգում և ծածկի փոխարինում
- Ձեղնահարկի հատակի ջերմամեկուսացում
- Մուտքի դռների և պատուհանների փոխարինում
- Ջրահեռացման ցանցի նորոգում
- Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված այլ աշխատանքներ

Աշխատանքները կիրականացվի հետևյալ տեղանքում՝

1. *Երեք հարկանի բազմաբնակարան շենք Ջերմուկի Խճուղի 23 հասցեում, ք. Վայք:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՇՄՇ-23>> ԲԲԸ
Ք. Վայք Համբարձումյան 6/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672826
ՀՎՀՀ 09101042
Տնօրեն՝
Հ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
«23» սեպտեմբեր 2019թ. կնքված
<<ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/08/15>> ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[39]*

«ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 23 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Նախահաշիվ 1-2					
	Վայք համայնքի Ջերմուկի խճուղի թ. 23 շենքի տանիքի վերանորոգում				
	Քանդման աշխատանքներ և ապամոնտաժման աշխատանքներ				
1	Տանիքի մաքրում գոյություն ունեցող աղբից	տ	1	0,788	0,79
2	Տանիքի ծածկի քանդում ասբոշիֆերից /կավարամածով/	100 մ^2	8,950	17,653	157,99
3	Խարամի շերտի հավաքում	մ^3	68,6	2,351	161,25
4	Տանիքի մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	100մ	1,588	7,164	11,38
5	Ձրհորդանի ապամոնտաժում	100մ	1,625	70,136	113,97
6	Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում	կ-տ	10,0	3,027	30,27
7	Գոյություն ունեցող փայտե պատուհանների ապամոնտաժում	100 մ^2	0,173	177,564	30,68
8	Շին աղբի հավաքում,դուրս բերում ,բարձում ա/ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում 4կմ	տ	94,4	1,806	170,45
	Օդափոխության հորան				
1	Պատերի կառուցում 100 մմ հաստ.պեմզաբլոկից / 5,8քմ/	մ^3	0,600	23,697	14,22
2	Անցքերի բետոնացում B 12,5 դասի բետոնով	մ^3	0,140	32,536	4,56
3	Շարվածքի ամրանավորում	տն	0,01	330,151	3,30
4	Հորանների զոնտերի պատրաստում 0,55մմ հաստությամբ հարթ ցինկապատ թիթեղից	մ^2	15,600	3,634	56,69
5	Ողողպատ շերտավոր 30x3մմ /զոնտերի ամրացման համար/	մ	30,000	0,298	8,95
6	Օդափոխության հորանների ջերմամեկուսացում ֆոլգայապատ ապակեբամբակով /տանիքի մեջ/	100մ^2	1,045	94,415	98,66
7	Օդափոխության հորանների բարձրացում ցինկապատ խողովակներով Φ100մմ, 0,55մմ հաստությամբ /50 գծմ /	մ^2	15,70	3,777	59,30
8	Օդափոխության հորանների թիթեղապատում 0,55մմ հաստությամբ հարթ ցինակապատ թիթեղով / տանիքից դուրս/	մ^2	54,80	2,408	131,98
	Բացվածքներ				
1	Մուտքի երկաթյա դռների վրա բացվածքնորի իրականացում պատուհանների տեղադրման համար /0,5x1,0/ 8հատ	տն	0,052	66,885	3,48
2	Մետապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ.ապակեփաթեթով 4+12+4 մմ պատուհանների տեղադրում /չբացվող/	մ^2	20,500	26,718	547,72
3	Մետապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ. ապակեփաթեթով 4+12+4մմ դռների տեղադրում	մ^2	19,600	35,624	698,23

[39] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

4	Պողպատե խողովակ 60x30x2մմ /պատուհանների ամրացման համար/	մ	26,000	1,008	26,22
5	Մետաղական էլեմենտների երկշերտ յուղաներկում	100մ2	0,005	99,185	0,50
6	Մուտքի դռների համար շվեցարներ /փակող սարք/	հատ	4,000	12,833	51,33
	Տանիք				
1	Տանիքի ծածկի կառուցում պրոֆ.ցինկ.թիթեղից ԿՊ - 35 - 0,55 հաստ	100 մ^2	8,950	339,662	3039,98
2	Կավարամածի պատրաստում 50x50մմ	մ2	114,50	8,337	954,55
3	Ջեղնալուսամուտի տեղադրում	հատ	4,000	48,766	195,06
4	Ցինկապատ 0,55մմ հաստության թիթեղից h=9,6մ d=150մմ ջրահեռացման խողովակների կախում	կ-տ	11,0	35,161	386,77
5	Ձրհորդանի կառուցում 0,55մմ հաստությամբ հարթ ցինկապատ թիթեղից	100մ	1,625	443,185	720,18
6	Գազաթնագծի կառուցում g/թիթեղից 0,55մմ	100մ^2	0,347	305,739	106,09
7	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների կառուցում /ջրհորդանի տախտակ, գազաթնագծի տախտակ/	մ^3	10,270	204,114	2096,25
8	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների փոխարինում /ծայրակցորդ, կանգնակ, մարդակ, ծպեղնատոք/	մ^3	2,500	204,114	510,29
9	Ամրան /ճարմանդ/ Φ8մմ	տն	0,030	314,881	9,45
10	Ծպեղնատոքերի ամրակապում տեղադրվող խարիսխներից /4մմ մետաղական լարով/	կգ	22,000	0,962	21,16
11	Տանիքի մետաղական ճախաշարի մոնտաժում	տն	0,638	41,975	26,78
12	Պողպատե անկյունակ 40x40x4մմ	մ	84,800	0,969	82,16
13	Ամրան Φ12 A500C	տն	0,424	309,237	131,12
14	Տանիքի ճաղաշարի երկշերտ յուղաներկում	տ	0,638	27,060	17,26
15	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ^3	24,600	9,159	225,31
16	Տանիքի կավարամածի և ջրհորդանի հրապաշտպանություն	100մ^2	10,650	29,631	315,57
17	Կավարամածի և ջրհորդանի մշակում հականեխիչ նյութով	10մ^2	106,50	3,660	389,78
	Տանիքի ջերմամեկուսացման աշխատանքներ				
1	Ծածկի սալերի կարանների մաքրում	մ^2	59,700	0,103	6,16
2	Ծածկի սալերի կարանների լցափակում պոլիմեր-ցեմենտային շաղախով	մ^3	1,300	180,498	234,65
3	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ^2	8,580	126,935	1089,10
5	Գոլորշամեկուսիչ շերտ (ISOVER VS / URSA SECO B)	մ^2	920,0	0,353	324,67
6	Փայտե չորսուներ 80x160մմ չափերի , 136գծմ	մ^3	1,750	163,382	285,92
7	Չորսուների մշակում հականեխիչ նյութով	10մ^2	6,530	3,660	23,90
8	Ալյումինե անկյունակներ 45x45x5, L=100մմ	մ	18,400	2,139	39,35
9	Դյուբել Φ6մմ-70մմ	հատ	368,0	0,091	33,45
10	Պտուտակ Φ4մմ-50մմ	հատ	184,0	0,011	1,97
11	Տանիքի ջերմամեկուսացում հանքային բամբակով 15 սմ հաստությամբ /20-30կգ/մ3/	100մ^2	9,2	361,125	3322,35
12	Գոլորշաթող ջրամեկուսիչ շերտ (ISOVER HB / URSA SECO D)	մ^2	920,0	0,321	295,16
13	Նրբատախտակի տեղադրում 10մմ հաստությամբ, չհղկված	մ^2	42,000	2,682	112,65
	Հարդարման, ներկարարական, երեսպատման աշխատանքներ				
1	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջի շաղախով	մ2	21,6	3,994	86,28
2	Պատուհանների արտաքին շեպերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ2	4,3	1,223	5,26
	Մտոցի ամրացման աշխատանքներ				

1	Պողպատե մտոցի մոնտաժում /դռնակով/	տն	0,063	66,885	4,21
2	Պողպատե անկյունակ 50x50x5մմ	մ	10,000	1,493	14,93
3	Պողպատե թիթեղ 600x600x2մմ	$մ^2$	0,720	6,211	4,47
4	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0,01	220,456	2,20
5	Ամրան Ա-3 Φ14	տ	0,01	307,455	3,07
6	Անցքերի շաղափում բետոնե սալի մեջ Φ14մմ	հատ	16,000	0,646	10,34
7	Անցքերի ցեմենտացում պոլիմերցեմենտային շաղախով	$մ^3$	0,100	105,004	10,50
8	Կողպեք կախովի	հատ	2,00	1,925	3,85
9	Մտոցի մետաղական էլեմենտների երկշերտ	$100մ^2$	0,014	99,185	1,39
	Հովհար				
1	Հովհարի ծածկի կառուցում պրոֆ. ցինկ. թիթեղից ԿՊ-35-0,55մմ հաստ.	$100\ մ^2$	0,115	339,662	39,06
2	Կցումներ g/թիթեղից հովհարի համար, լայնությունը մինչև 0,4մ	$մ^2$	2,500	2,180	5,45
	Ընդամենը				17570,00
	ԱԱՀ 20%				3514,00
	Ընդամենը				21084,00

* Կապալառուն աշխատանքները կատարում է Վայոց ձորի մարզ Վայք համայնք ք. Վայք ջերմուկի խճուղի 23 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՇՄՇ-23>> ԲԲԸ
Ք. Վայք Համբարձումյան 6/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672826
ՀՎՀՀ 09101042
Տնօրեն՝
Հ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» սեպտեմբեր 2019թ. կնքված
<<ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/08/15>> ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 23 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**« Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 23 բազմաբնակարան շենքի ջերմաարդյունավետության արդիականացմանը ուղղված վերանորոգման աշխատանքներ »**	23.09.2019	25.11.2019թ
ԸՆԴԱՄԵՆԸ			**60օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գոռծառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՇՄՇ-23>> ԲԲԸ
Ք. Վայք Համբարձումյան 6/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672826
ՀՎՀՀ 09101042
Տնօրեն՝
Հ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«23» սեպտեմբեր 2019թ. կնքված
<<ՎՀ-ԳՀԱՇՁԲ-19/08/15>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261124	**« Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 23 բազմաբնակարան շենքի ջերմաարդյունավետության արդիականացմանը ուղղված վերանորոգման աշխատանքներ »**	10542000	21084000	21084000	21084000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Վայք համայնք Ք. Վայք Շահումյան 18
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՇՄՇ-23>> ԲԲԸ
Ք. Վայք Համբարձումյան 6/4
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004672826
ՀՎՀՀ 09101042
Տնօրեն՝
Հ. Մաթևոսյան

/ստորագրություն/
Կ.Տ